ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՆԳԼԵՐԵՆ

(առարկա)

ԹԵՄԱ՝ «ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԺԱՄԵՐԻՆ»

Կազմեց՝ ՆՈՆՆԱ ԱՂԱՄՅԱՆ ԱՐՄԵՆԻ

(անուն, ազգանուն, հայրանուն)

Կապան N3 միջնակարգ դպրոց

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Թագուհի Ղոնյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1 « Ուսուցման մեթոդների դասակարգումը»....4

1.1 Ուսուցման փոխներգործության մեթոդներ….....4

1.2 Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչները.....5

1.3 Ուսուցման մեթոդի ընտրությունը.....5

Գլուխ 2 «Համագործակցային ուսուցում».....9

2.1 Խմբերի ձևերը.....11

2.2 Խմբակային ուսուցման կազմակերպման
եղանակները.....12

2.3 փոխներգործությունը դասերի ընթացքում և ակնկալվող արդյունքը….....15

Գլուխ 3 Սեփական հետազոտություն.....16

Եզրակացություն.....26

Օգտագործված
գրականություն.....27

Ներածություն

Ցանկացած առարկայի ուսուցիչ պետք է իր դասերին կիրառի դասավանդման նորարարական, ժամանակակից մեթոդներ: Բացի գիտելիք տալուց ուսուցիչը պետք է սովորողի մոտ զարգացնի դրանք կիրառելու կարողություն, ստեղծագործական միտք, քննադատական մտածողություն:

Ուսուցման արդյունավետությունը պայմանավորված է սովորողի ձեռք բերած կարողունակություններով: Այդ ամենին հասնելու համար, ուսուսիչը ուսումնառության ընթացքում պետք է կիրառի տարբեր արդյունավետ եղանակներ՝ ինչպիսիք են խմբային, զույգերով, անհատական բնույթի աշխատանքներ, թերթիկների վրա նյութերի մշակում, խաղային մեթոդներ: Այս ամենի հետ նաև կարևոր է, որ աշակերտները համագործակցեն միմյանց հետ:Եվ այս ուսումնական միջավայրի ամենագործուն և ամենաարդյունավետ եղանակը խմբային աշխատանքն է:

Դասավանդման այս եղանակը արդյունավետ է լինում, եթե ուսուցիչը հետամուտ է լինում ուսման բազմամակարդակ գործընթացին և կարողանում է այն իրագործել:

Կազմակերպման եղանակները կազմված են՝

- Առարկայի բովանդայությամբ
- Կրթությունը ներկայացվող պահանջներով ու դասավանդման եղանակներով
- Աշակերտների անհատական պահանջներով
- Աշխատանքի հավասար բաժանում, փոխադարձ պատասխանատվություն:
- Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերտների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ միտումնավոր կերպով:
  Լավ կազմակերպած խմբային աշխատանքը դրական ազդեցություն է ունենում աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա՝
- միասին մտածելը,
- հարմարվելու ունակությունը,
- համագործակցություն,
- փաստարկներ բերելու, համոզելու ունակություն
- ուրիշների նկատմամբ հարգանք, հանդուրժողականություն:

Գլուխ 1. Ուսուցման մեթոդների դասակարգումը

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն ուսուցման մեթոդների դասակարգման շատ մոտեցումներ, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցության աստիճանի վրա՝ պասիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն Բայց դրանց հիմքում դրված է հետևյալ հատկանիշները.

●Ճանաչողական աղբյուրները (ուսուցման խորքային, դիտողական, գործնական մեթոդներ)

●Տրամաբանական սկզբունքը (ուսուցման վերլուծական -համադրական, ինդուկտիվ-դեդուկտիվ մեթոդներ)

●Ուսուցման տիպը (ուսուցման բացատրական մեկնաբանման, պրոբլեմային զարգացնող մեթոդներ)

●Պրոբլեմայնության մակարդակը (ցուցադրական, մենախոսական, երկխոսական, էվրիստիկ, ծրագրավորման մեթոդներ)

●Դիդակտիկ նպատակները և գործառույթները (խթանման կազմակերպման և վերահսկման մեթոդներ)

Ուսուցչի գործունեության տեսակը (շարադրանք, ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման մեթոդներ) և այլն:

Չնայած ուսուցման մեթոդների դասակարգման հիմունքների այդպիսի բազմազանության, դրանցից յուրաքանչյուրն արդյունավետ է ուսումնական գործընթացի կազմակերպման որոշակի պայմաններում և որոշակի դիտակտիկ գործառույթների կատարման դեպքում: Վերջին շրջանում մանկավարժական գրականության մեջ տարածում ունի ինտերակտիվ մեթոդների խնդիրը:

1.1. Ուսուցման/ուսումնառության փոխներգործության (ինտերակտիվ) մեթոդներ

Ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ վարժությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը հիմնականում ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:

Տերմինը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ. անգլերենում <<inter>>-փոխադարձ,<<act>>-գործողություն: Ինտերակտիվ նշանակում է փոխանցել կամ զրույցի, երկխոսության մեջ գտնվել, ինչ որ մեկի կամ համակարգչի հետ: Այսպիսով, ինտերակտիվ ուսուցումը առաջին հերթին ուսուցում է երկխոսության միջոցով: Այն ուսուցողական տեխնոլոգիա է հիմնված խմբի անդամների փոխազդեցության և ուսումնառության խնդիրների լուծման, սովորողի ազատության վրա:

1.2 Ինտերակտիվ ուսուցման հիմնական բնութագրիչները

Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ, նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է: Ինտերակտիվ ուսուցման էությունն այն է, որ բոլոր սովորողներն ընդգրկվում են

ուսումնառության մեջ: Ընդ որում, յուրաքանչյուրն իր անհատական ներդրումն է անում, տեղի է ունենում գիտելիքների, մտքերի փոխանակում: Ի դեպ, դա իրականացվում է բայրացկամության և փոխօգնության մթնոլորտում, որը նպաստում է ոչ միայն նոր գիտելիք ստանալուն, այլև զարգացնում իմացական գործընթացը, այն բերելով ավելի բարձր մակարդակի ՝ համագործակցային ձևի:
Ինտերակտիվը բացառում է որևէ մեկի առանձնահատկությունը, գերակայություն մյուսների, ինչպես նաև մի տեսակետի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Այսպիսի ուսուցման ընթացքում աշակերտները սովորում են քննադատաբար մտածել, տեղեկատվության վերլուծական հիման վրա բարդ խնդիրներ լուծել, ինչպես նաև քննարկել այլընտրանքային տեսակետներ, ընդունել կշռադատված որոշումներ, մասնակցել բանավեճերի և այլն:
Դասերի ընթացքում կազմակերպվում են անհատական, խմբային, զույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական ծրագրեր, դերային խաղեր, փաստաթղթերի և սկզբնաղբյուրների հետ աշխատանք, ստեղծագործական գործունեություն և այլն:
<u>Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.</u>
● Փոխազդեցությունը, փոխուսուցումը
●Սովորողի ակտիվությունը
●Համագործակցություն
●Ինքնաարտահայտման խրախուսում
●Հետադարձ կապ

1.3 Ուսուցման մեթոդի ընտրությունը

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է: Հետևաբարը պետք է հաշվի առնել ուսուցման մեթոդների վրա ազդող մի շարք գործոններ.
● Ուսուցման նպատակները և խնդիրները
● Բովանդակությունը
● Ուսումնական նյութի քանակ և բարդությունը
● Սովորողների պատրաստվածության մակարդակի
● Սովորողների շահագրգռվածությունը
● Սովորողների տարիքն ու աշխատունակությունը, ուսումնական վարժվածությունն դիմացկունությունը
● Ուսումնական ժամաքանակը
● Ուսուցման նյութատեխնիկական ու կազմակերպչական պայմանները
● Մյուս դասերին կիրառվող մեթոդները
● Ուսումնական պարպմունքների տիպը և կառուցվածքը
● Ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները

●Սովորողների թվաքանակը դասարանում

● Ուսուցչի պատրաստվածության մակարդակը

Երեխայակենտրոն ուսուցումն ապահովվելու և ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շատ կարևոր է զույգերով և ենթախմբերով, համագործակցային աշխատանքների կազմակերպումը: Այն հնարավորություն էտալիս փոխանակել միմյանց հետ փորձն ու գիտելիքները: Ուստի արդյունավետ դասը պետք է կազմակերպել տարբեր խմբերով:

Աշխատանք փոքր խմբերով

Աշխատանքը փոքր խմբերում ուսուցման կազմակերպման ձև է, որը սովորողներին հնարավորություն է տալիս իրենց գիտելիքներն ու փորձը դասընկերների հետ փոխանակել, համատեղ խնդիրներ լուծել: Ուսուցման այս ձևը ժողովրդավարական հասարակության ձևավորման կարևոր նախապայմաններից է:

Փոքր խմբերում ուսուցումը ունի հետևյալ նպատակները.

- Զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունը
- Ձևավորում է հաղորդակցման հմտություն
- Աշակերտները սովորում են միմյանցից
- Զարգացնում է աշակերտի պատասխանատվության զարգացումը, միմյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում
- Խթանում է թիմային աշխատանքը

<u>Խմբի տեսակները</u>

Խմբերի 2 հիմնական տեսակներ կան. համասեռ և տարասեռ:

Համասեռ խմբով աշխատելու պարագայում ուսումնական ձեռքբերումների միևնույն մակարդակն ունեցող աշակերտները աշխատում են իրար հետ: Այս ձևը նպատակահարմար է կիրառել ոչ ֆորմալ, կարճաժամկետ գործունեության համար նախատեսված խմբերի դեպքում: Առավել արդյունավետ է տարասեռ խմբերով աշխատանքը: Այս դեպքում խմբերում աշխատում են ուսումնական հաջողությունների տարբեր մակարդակ ունեցող աշակերտներ:

Ուսուցման հնարներ

Նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող են օգտակար լինել: Ներկայացնում ենք փոքր խմբերով աշխատելու հնարները:

Մտածիր զույգ կազմիր քննարկիր

Սա բավական պարզ, բայց արդյունավետ մեթոդական հնար է, որը նպաստում է աշակերտի մտածական հմտությունների զարգացմանը, նոր գաղափարների ի հայտ գալուն: Առաջին փուլում աշակերտները անհատապես մտածում են առաջադրանքը շուրջ Երկրորդ փուլում իրենց տեսակետը քննարկում են դասարանի աշակերտներից որևէ մեկի հետ: Երրորդ փուլում նրանք իրենց տեսակետը ներկայացնում են ամբողջ դասարանին:

Զնակույտ

Այս մեթոդական հնարն ունի նախորդի տրամաբանությունը: Պարզապես, այս դեպքում զույգերով աշխատելուց հետո, արդեն երրորդ փուլում, աշակերտները իրենց տեսակետը ներկայացնում են ոչ թե ամբողջ դասարանի, այլ շարունակում են աշխատել 4 հոգանոց խմբում: Հնարավոր է նաև քննարկումը շարունակել 6 կամ 8 հոգանոց խմբերում: Սակայն ճիշտ կլինի, եթե 4 հոգանոց խմբերում քննարկում անելուց հետո անցկացվի համադասարանական քննարկում:

Ուսումնական նվաճումներ

Այս մեթոդական հնար կիրառման սխեման հետևյալն է՝ դասախոսություն -խմբային աշխատանք-անհատական աշխատանք: Դասի սկզբում ուսուցիչը դասախոսությամբ ներկայացնում է նոր նյութը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն խնդիրների, առաջադրանքների վրա որոնցից աշակերտները հետագայում պետք է անհատական աշխատանք կատարեն: Ապա աշակերտները խմբում աշխատում են դասախոսության սղագրության վրա՝ միմյանց օգնելով հասկանալ դրա բովանդակությունը: Աշակերտները կարող են միմյանց հարցեր տալ՝ պարզելու անհասկանալի խնդիրները: Ուսուցչին կարելի է հարց տալ, երբ խմբի անդամներից ոչ մեկը պատասխանը չգիտի: Դասախոսության սղագրության վրա աշխատելուց հետո աշակերտները կատարում են անհատական աշխատանք: Անհատական աշխատանքի հանձնարարությունը ձևակերպում է ուսուցիչը: Անհատական աշխատանքի փուլում աշակերտները չեն կարող միմյանց օգնել՝ Ուսուցիչը գնահատում է անհատական աշխատանքները: Աշակերտը միավոր է բերում իր խմբին, եթե հավաքում է ավելի շատ միավորներ, քան հավաքել էր նմանատիպ նախորդ մրցույթում: Այն խումբը, որը հավաքում է ամենաշատ միավորները, ճանաչվում է հաղթող:

Ուսումնական մրցույթ

Այս հնարը կիրառվում է որպես նախորդի տրամաբանական շարունակությունը: Ուսուցիչը աշակերտներին վերաբաժանում է խբերի՝ ըստ առաջադիմության: Յուրաքանչյուր խմբի լավագույն աշակերտները հավաքվում են մեկ ենթախմբում, միջին ցուցանիշներ ունեցողները՝ երկրորդ խմբում, ցածր ցուցանիշներ ունեցողները՝ երրորդ ենթախմբում: Յուրքանչյուր ենթախմբի տրվում է թղթի վրա գրված 25-30 հարց: Ենթախմբերին տրվում են տարբեր բարդության հարցեր:

Աշակերտները հերթով վերցնում են հարցերը և պատասխանում դրանց: Պատասխանները կարող են լինել և գրավոր և բանավոր: Խմբի մյուս անդամները գնահատում են պատասխանողին: Օրինակ ճիշտ պատասխանի դեպքում կարելի է տալ 1 միավոր, սխալի դեպքում՝ 0: Վիճելի իրավիճակում որոշում է կայացնում ուսուցիչը: Ապա ենթախմբերի աշակերտները վերադառնում են իրենց նախնական խմբերը: Հաղթում է այն խումբը, որի անդամները ավելի շատ միավոր են հավաքել ենթախմբում:

Խմբային աջակցություն անհատական ուսուցմանը

Այս մեթոդը աշակերտներին հնարավորություն է ընձեռում ուսումնական ծրագիրը յուրացնել անհատական տեմպով: Աշակերտները աշխատում են փոքր խմբերում՝ կատարելով անհատական առաջադրանքները: Այդ ընթացքում նրանք կարող են ընկերներին հարցեր տալ, օգնություն խնդրել: Խմբի անդամները կարող են ստուգել միմյանց աշխատանքները, շտկել սխալները: Աշակերտները պետք է ջանան միմյանց օգնել, որպեսզի իրենց խումբը արագ ավարտի առաջադրանքը: Առաջադրանքները ստուգում են ուսուցչի կողմից նշանակված աշակերտ-գնահատողները, որոնց ուսուցիշը տալիս է հարցերի ճիշտ պատասխաններով թերթիկը: Շաբաթվա վերջում հաշվարկվում է, թե քանի թեմա է սովորել յուրաքանչյուր խումբ:

Գլուխ 2. Համագործակցային ուսուցում

Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի նոր մշակույթի ձևավորում: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է: Համագործակցության աստիճանից կախված դասապրոցեսում հնարավոր են փոքր խմբերով հետևյալ մակարդակները.

1. **Կեղծ խմբեր:** Թեև աշակերտները աշխատում են խմբերով, բայց առանձնակի շահագրգռվածություն չեն դրսևորում: Նրանք մտածում են, որ ուսուցիչը իրենց գնահատելու է անհատական աշխատանքի համար: Արտաքուստ աշակերտները քննարկում են, բայց խորքում նրանք մրցակցում են: Նրանք միմյանցից քողարկում են գիտելիքները, իրար շփոթեցնում են:

2. **Ավանդական խմբեր:** Աշակերտները բաժանված են խմբերի, բայց առաջադրանքը տրված է այնպես, որ համատեղ աշխատանքի կարիք չի զգացվում: Աշակերտները աշխատում են անհատական, առանց մտքեր փոխանակելու, միմյանց հետ համագործակցելու:

3. **Համագործակցային խմբեր:** Աշակերտները հասկանում են, որ իրենց հաջողությունը կախված է խմբի բոլոր անդամների ներդրումից: Նման խմբերին բնորոշ է թիմային աշխատանքի ոգին, ընդհանուր նպատակին հասնելու համար առավելագույնը անելու ցանկությունը, փոխկախվածությունն ու փոխկապվածությունը, սոցիալական խմբի փոխազդեցության հմտությունները, աշխատանքի ընթացքը և արդյունքը մշտապես գնահատելու ու վերանայելու կարողությունը:

4. **Բարձրակարգ համագործակցային խումբ:** Այս խումբն ունի նախորդի բոլոր հատկանիշները: Վերոնշյալից զատ բարձրակարգ Համագործակցային խմբի անդամները աջակցում են յուրաքանչյուրի անհատական առաջընթացին, գործում են փոխադարձ նվիրվածության սկզբունքով: Հասկանալի է, որ իրականում նման խմբեր հազվադեպ են լինում:
Այսպիսով, ոչ բոլոր խմբերը կարելի է համարել համագործակցային: Աշակերտներին մի սենյակում նստեցնելը, մի խմբում ընդգրկելը, նույն առաջադրանքը տալը դեռևս բավարար չեն համագործակցային ուսուցման մասին խոսելու համար: Ուսուցիչը պետք է նկատի ունենա այն հանգամանքը, որ փոքր խմբերով աշխատանքները կիրառելու սկզբնական փուլում համագործակցային ուսուցման հավանականությունը փոքր է: Բայց պետք է հետևողականորեն ձգտել համագործակցային ուսուցման մթնոլորտի ստեղծմանը, որպեսզի արդարացված ու արդյունավետ լինի փոքր խմբերով աշխատանքը:

Համագործակցային փոխուսուցում

Այս հնարի էությունն այն է, որ սովորողները փոխադարձաբար աջակցում են միմյանց ստուգելով աշխատանքները, համատեղ կատարելով տնային աշխատանքները, իրար սովորեցնելով ուսումնասիրվող թեմաները:

Փոքր խմբերով աշխատանքի առավելությունները

• Խթանում է բանավեճը դասի ընթացքում

• Խրախուսում է մասնակցությունը

• Ուսուցման գործընթացում սովորողը ակտիվ է

• Դասարանում ձևավորվում է համագործակցային ուսուցման մթնոլորտ

• Ստեղծում է մրցակցության մթնոլորտ

Սահմանափակումներ

●Ուսուցչի համար դժվար է վերահսկել բոլոր աշակերտներին

• Առանձին աշակերտներ կարող են գերիշխող դեր ունենալ խմբում

• Ժամանակավոր է

• Դասարանում կարող է ավելորդ աղմուկ առաջանալ

Համագործակցային ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների) հինգն են՝

1. Դրական փոխկախվածություն.

Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.

Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.

Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. Սոցիալական հմտություններ.

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը։

5. Խմբային գործընթաց.

Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության Աբարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է։ Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը։

Հետագայում այդ տարրերին Պասի Սալբերգի կողմից ավելացվեց փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը որպես համագործակցային ուսուցման 6-րդ տարր։ Նրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը։

2.1 Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են 2-4 անդամ։
Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝
1. Խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները , տալիս հարցեր
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն։

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբեր

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար։
Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր

Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում։ Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի

կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցային ուսուցման մեթոդներ

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք.

2.2 Խմբակային ուսուցման կազմակերպման եղանակները

Խմբերում ընդգրկված աշակերտների թվի նշանակությունը

Ամենափոքր խմբում պետք է ընդգրկած լինի առնվազն 3 աշակերտ, քանի որ դրանից պակաս լինելու դեպքում աշխատանքը խմբում դառնում է զույգերով կամ անհատական: Լավագույն տարբերակն այն է, երբ խմբում ընդգրկված է 4 աշակերտ. այս դեպքում յուրաքանչյուր մասնակից կարող է ունենալ իր ենթաառաջադրանքը, և, ավելին,անհրաժեշտության դեպքում խմբի անդամներին կարելի է հեշտությամբ բաժանել զույգերի: Վեցից ավելի աշակերտներից բաղկացած խմբերը դժվար է կառավարել, քանի որ որոշ աշակերտներ կարող են որոշել չմասնակցել խմբի աշխատանքներին և նույնիսկ խանգարել մյուսներին:

Միատարը և բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի ձևավորման մոտեցումները

Միատարը կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է. Որ՝

• տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրությունները գրեթե նույնն են:

Բազմատարր կառուցվածք ունեցող խմբերի առանձնահատկությունն այն է, որ

• տվյալ առարկայում աշակերտների ընդունակություններն ու հետաքրքրություններն ակնհայտ տարբեր են:

Վերջին դեպքում կարող է օգտակար լինել դերերի բաշխումը՝ ապահովելու, որ յուրաքանչյուր անդամ, իր ընդունակությունների սահմաններում, ներգրավվի խմբի աշխատանքներում: Նման խմբային աշխատանքն ապացուցում է այն տեսությունը, որ աշակերտները կարող են շատ արդյունավետ կերպով սովորել միմյանցից:

Դերերի բաշխումը խմբում

Արդյունավետ համագործակցության հիմքում ընկած է աշխատանքի հավասար բաժանումը և փոխադարձ պատասխանատվությունը:

Դրան կարելի է հասնել խմբի առանձին անդամներին որոշակի դեր/առաջադրանք տալով: Խմբում առաջադրանքներ և պարտականություններ բաշխելը կարող է ունենալ երկակի ազդեցություն՝ մի կողմից այն ամրապնդում է գոյություն ունեցող շփման հմտությունները, մյուս կողմից այն ստեղծում և զարգացնում է այլ հմտություններ:

Քանի որ սկզբնական շրջանում աշակերտները չեն կարող ինքնուրույն կազմակերպել իրենց աշխատանքը, արդյունավետ կլինի, որ ուսուցիչը բաշխի դերերը (ղեկավար, քարտուղար, փաստաթուղթ կազմող, զեկուցող): Այս եղանակով մի կողմից հնարավոր է ժամանակ խնայել, մյուս կողմից յուրաքանչյուր երեխայի հանձնարարվում է իր ընդունակություններին առավել համապատասխան աշխատանք: Այնուամենայնիվ, աշակերտներին պետք է նաև նոր դերերում իրենց փորձելու հնարավորություն տրվի: (Օրինակ՝ այն աշակերտը, որը սովորաբար առաջնորդի դեր է ստանձնում, պետք է սովորի հարգել և համագործակցել առաջնորդի դեր ստանձնած այլ աշակերտների հետ, իսկ ամաչկոտ աշակերտները պետք է փորձեն հրապարակավ արտահայտվել:)

Չնայած, որ բարձր դասարաններում դերերի տարբերությունն այնքան էլ կարևոր չէ աշակերտների համար, այնուամենայնիվ պատասխանատվության զգացումը զարգացնելու նպատակով օգտակար կլինի աշակերտներին հանձնարարել դերեր՝ ըստ ուսումնասիրվող առարկայի:

Խումբ ձևավորելու եղանակները

Խումբը կարող է ձևավորվել պատահականության սկզբունքով, աշակերտների ցանկությամբ կամ էլ ուսուցչի կողմից՝ միտումնավոր կերպով: Ակնհայտ է, որ վերջին տարբերակն ուսուցչին հնարավորություն կտա հասնելու իր դիդակտիկ նպատակներին, քանի որ այս դեպքում խմբում հնարավոր է ապահովել արդյունավետ համագործակցության բոլոր պայմանները՝

• ընդունակությունը և գիտելիքը,
• անձնական համակրանքը,
• գենդերային հավասարակշռությունը,
• էթնիկ խմբերի ներկայացուցիչների մասնակցությունը:

Խմբային աշխատանքի առավելությունները

Լավ կազմակերպված խմբային աշխատանքը մեծապես ազդում է աշակերտների անհատականության և արժեքային համակարգի ձևավորման վրա՝

● միասին մտածելը,
● հարմարվելու ունակությունը,
●համագործակցությունը,
●փաստարկներ բերելու/համոզելու ունակությունը,

● այլոց նկատմամբ հարգանքը, տարակարծության նկատմամբ հանդուրժողականությունը,
●խմբի մաս լինելու փորձը:

Զույգերով աշխատանք

«Զույգերով աշխատանք» և «Միասին սովորող զույգեր» հասկացությունները

● Զույգերով աշխատանքի ընթացքում, նույն ընդունակություններով երկու աշակերտ աշխատանքը կատարում են միմյանց հետ համագործակցելով: Սա միատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է
● Միասին սովորող զույգերի դեպքում աշակերտներից մեկն իր ընդունակություններով զիջում է մյուսին: Ավելի բարձր ընդունակություններով աշակերտը կատարում է «ուսուցչի» դերը (ուսանում ուսուցանելու ընթացքում): Սա բազմատարր կառուցվածք ունեցող զույգի տարբերակն է:

Զույգեր կազմելիս դիտարկման արժանի հանգամանքները

Իդեալական տարբերակում աշակերտները լավ են վերաբերվում և աջակցում են միմյանց:

Զույգերի տեսակները

Համագործակցող զույգերը կարող են մի շարք գործառույթներ կատարել (կարդալ, գրել, հաշվել, մտածել):

Զույգեր ձևավորելու եղանակները

Զույգերը կարող են ձևավորվել մշտապես կամ ժամանակավորապես, կամ էլ որևէ առարկայի շուրջ (օրինակ՝ մաթեմատիկայի դասաժամի համար կազմված զույգեր) միասին աշխատելու նպատակով:

Զույգերով թե՞ խմբային աշխատանք
Փորձը ցույց է տալիս, որ 6–10 տարեկան աշակերտներն առավել արդյունավետ են աշխատում զույգերով (տե՛ս վերը նշված կետերը), երբ երկուսն էլ հավասարապես համագործակցում են:

Անհատական
Աշխատանքը
Անհատական աշխատանքի
հասկացությունը

Յուրաքանչյուր աշակերտ ունի տարբեր ընդունակություններ և սովորելու անհատական ոճ: Այս փաստը պետք է հաշվի առնել չափազանց բարձր կամ չափազանց թույլ ընդունակություններով աշակերտների պարագայում: Աշակերտի

անհատական ընդունակությունները զարգացնելու համար կազմված ծրագիրը կոչվում է անհատականացում: Այն հատկապես օգտակար է շնորհալի երեխաների հետ աշխատելիս, կամ երբ անհրաժեշտ է, որ որոշ աշակերտներ առաջադիմության առումով հետ չմնան իրենց դասընկերներից:

Ինքնուրույն և անհատականացված աշխատանքի տարբերությունը

Ինքնուրույն աշխատանքը կարող է կատարվել անհատական եղանակով, զույգերով կամ խմբային աշխատանքի արդյունքում: Կարևորն այն է, որ աշակերտներն ինքնուրույն աշխատեն: Անհատականացված աշխատանքի դեպքում առաջադրանքը մշակված է տվյալ անհատի կարիքներին համապատասխան:

Մասամբ անհատականացված աշխատանք

● Նույն մակարդակն ունեցող բոլոր աշակերտներն նույն առաջադրանքը կատարում են ինքնուրույն :
● Մասամբ անհատականացված և խմբային աշխատանքի տարբերությունն այն է, որ մասամբ անհատականացված աշխատանքը կատարվում է ինքնուրույն, առանց համագործակցության, մինչդեռ խմբային աշխատանքի հիմքում ընկած է համագործակցությունը:

2.3 Փոխներգործությունը դասերի ընթացքում և ակնկալվող արդյունքը

Համագործակցության ուսուցման գաղափարախոսությունը մանրամասն մշակվել է ամերիկացի մանկավարժների կողմից: Այս տեխնոլոգիայի հիմնական գաղափարը տարբեր կրթական իրավիճակներում սովորողների ակտիվ համատեղ կրթական գործունեության համար պայմաններ ստեղծելն է:

Ա.Ն. Շուկինը նշում է, որ համագործակցության մեջ ուսուցման տեխնոլոգիան հիմնված է խմբում աշակերտների փոխներգործության գաղափարի վրա, որտեղ աշակերտները ոչ միայն անհատական, այլև կոլեկտիվ պատասխանատվություն են կրում ուսումնական խնդիրների լուծման և յուրաքանչյուր սովորողի հաջողության վրա:

Համագործակցային ուսուցման ժամանակ ստեղծվում է «աշակերտ-ուսուցիչ-խումբ» փոխգործակցության պայմանները:

Փոխներգործության տեսակներն են `

1. Դեստրուկտիվ

2. Սահմանափակող

3. Օժանդակող

4. Կոնստրուկտիվ

Համագործակցության մեջ թույլ աշակերտները փորձում են ուժեղներից պարզել իրենց համրա անհասկանալի հարցերը և ուժեղ աշակերները ցանկանում են օգնել և այդպիսով աշակերտները հասկանում են նյութը:

Թիմային աշխատանքի առանձնահատկություններն են՝

1. Ընդհանուր նպատակ

2. Մոտիվացիա

3. Մասնակիցների միջև առաջադրանքների բաժանում

4. Առանձին առաջադրանքների ինտեգրում

5. Ինքնակրթություն

6. Գործունեության ընդհանուր արդյունքներ

Դպրոցում օտար լեզվի ուսուցման ընթացքում մուլտիմեդիա ներկայացումը դառնում է ավելի անհրաժեշտ: Դրա շնորհիվ նյութը ներկայացվում է ամենաարդյունավետ կերպով:

Այսպիսով փոխներգործուն տեխնոլոգիաները հիմնված են աշակերտի և ուսուցչի միջև երկխոսության հաղորդակցության վրա, ուստի բոլոր աշակերտները ներգրավվում են դասի մեջ:

Լեզվի արդյունավետ ուսուցման համար անհրաժեշտ պայմաններ են՝ ազատ շփումը, կարծիք արտահայտելը, փոխադարձ հարգանքը:

Այսպիսով օտար լեզվի ուսուցման գործընթացում կրթական և մանկավարժական փոխներգործության առանձնահատկությունը բաժանվում է 2 խմբի՝

1. Ուսուցիչը պետք է նպաստի աշակերտի անհատականության զարգացմանը, բայց նաև մնա առաջատար դասարանում:

2. Օտար լեզվի դասերին առաջնահերթությունը տրվում է խմբային աշխատանքի ձևերին՝ և ստեղծվում է փոխներգործակցության մթնոլորտ:

Գլուխ 3. Մեփական հետազոտություն

Համագործակցության դասերը կիրառում ենք դասի տարբեր փուլերում, որպեսզի հասնենք դասի վերջնարդյունքներին, մոտիվացնենք աշակերտներին և զարգացնենք քննադատական մտածողություն:

Այս դասը անց եմ կացրել 10-րդ դասարանում: Դասարանը բաղկացած էր 30 աշակերտից, դասի թեման “The changed the world,,

Դասի պլանում մանրամասն նկարագրված է, թե ինչ մեթոդներ կիրառեցի, դասի վերջնարդյունքներին հասնելու նպատակով:

Համոզված կարող ենք ասել, որ համագործակցային ուսուցման մեթոդներով կազմակերպված դասը բավականին արդյունավետ է:





ESL LESSON PLAN TEMPLATE

OVERVIEW		
Lesson Title: Eurica		Unit Title:They changed the world
Lesson #:1	ESL/ levelA2-B1	Class Level:10
Length of Lesson in # of Hours:45	# of Classes in unit:5	Teacher(s):Nonna Aghamyan
STAGE 1 – PLANNING FOR DESIRED RESULTS		
LESSON OBJECTIVES: CONTENT AND LANGUAGE		
By the end of this lesson, students will be able to: *Use the past simple to speak about famous people.* *Recognize famous people* *Write an essay "how to change the world "using the new words of the text* *Enhance students vocabulary in the context of the lesson*		

STANDARDS AND BENCHMARKS THAT SUPPORT AND ALIGN WITH THE LESSON OBJECTIVES	KEY INSTRUCTIONAL SHIFTS
Listen and understand the new text. Retell ,describe the events,feelings,facts,news emphasizing the important information. Make up dialogues using the new words and phrases. Pronounce new and unfamiliar words correctly. Know approximately 1300-1550words. Know and use bilingual vocabulary and spell them correctly. Write short and long essays.	*Indicate those addressed in this lesson:* ☐ Practice with complex text and academic language ☒ Ground reading, writing, and speaking in evidence from literary and informational texts ☐ Build knowledge through content-rich nonfiction
ESSENTIAL QUESTION(S) *(optional)*	
What scientist,musicians,composers do you know who changed the world? Who is the well-known English mathematician and scientist that became famous for his law of gravitation? Who is the richest man and the CEO of Microsoft corporation? Who was the Iron Lady? The first American who set foot on the moon. Who said “One per cent of talent and 99 percent of perspiration “?	

How to become successful ? Whose invention changed our world and who is your idol?	

PRIOR KNOWLEDGE NEEDED
Basic and intermediate knowledge of English to speak and introduce the new material to write an essay.

STAGE 2 -- EVIDENCE OF LEARNING
Ways that students and I will know the extent to which objectives have been met: *Questioning,discussion,kahoot ,quizzes*

STAGE 3 -- LEARNING PLAN		MATERIALS	TIME *(optional)*
INTRODUCTION *Guiding Questions* ▪ *How will students know the purpose for this lesson?* ▪ *How will I contextualize the language focus of the lesson?*	I shall introduce the students 1.How will they learn? 2.What is the main goal of our lesson? 3.What methods will I need to achieve my goals? 4.How will they learn? 5.What are the objectives of our lesson?	Book,wall charts, Power point presentation,smart board,wallpaper	5 minutes

STAGE 3 -- LEARNING PLAN		MATERIALS	TIME *(optional)*
BODY OF THE LESSON *Guiding Questions* ▪ *What opportunities will students have to practice new language and use it in authentic communicative activities?* ▪ *What questions will I pose to engage students, foster thinking and reasoning, and elicit language production?* ▪ *What academic and content vocabulary will students learn?* ▪ *How will I monitor the student learning and acquisition of language targets of the lesson?* ▪ *What opportunities will students need for scaffolding and differentiation?*	1.Warm-up What can you see? I'll share different pictures of famous people and the students must guess their names. 2. I'll unlock unfamiliar words that will be used in the lesson. 3. Using power point presentation I'll show famous people and ask students about how well they know and recognize them. 4.I will discuss with students how these people changed the world and introduce them some famous scientists,musicians,actors who became successful. New words: invention,sharp mind,gravitation,explore,presentation,masterpiece…. After the discussion l will divide the class in groups of 3 and give them a practice activity.Students have to create their language not just repeat it(essay about famous people)then represent their creation using new vocabulary and the past simple tense. Each group must make a wall chart of a popular person who they	Pictures,power point presentation,a ,dictionary ,paper,cards	15-17minutes 15 -20minutes

STAGE 3 -- LEARNING PLAN		MATERIALS	TIME *(optional)*
	like.If they meet the objectives l will help them. Each group will represent their output in front of the class.		
CLOSING *Guiding Questions* ▪ *How will I bring closure to the lesson and provide opportunities for student reflection (i.e., transfer of knowledge/skills)?*	Summerize the lesson,consolidate key information. Questions How did you overcome the challenges? What did you learn? What did you find more interesting?		

STAGE 3 -- LEARNING PLAN		MATERIALS	TIME *(optional)*
	How did you help each other during the lesson? Ask and answer questions,share their achievements.		
TEACHER REFLECTION ▪ *What changes or adaptations would I make after teaching the lesson?*	Overall the lesson went really well. I analyzed my lesson and I think I would change the number of students involved in a group .I realized more than ever the importance of being flexible.I must remember to spend less time on explanation and get right into the practice activities.		5minutes

Notes_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Եզրակացություն

Ուսումնասիրելով ,, Խմբային աշխատանքի կիրառումը օտար լեզվի ժամերին՝ հետազոտական աշխատանքը հանգեցի այն եզրակացության, որ ուսուցման հաջողությունը մեծապես կախված է աշխատանքի մեթոդաբանությունից և աշակերտի հետ օտար լեզվի ուսուցչի փոխազդեցությունից՝ կոնկրետ կրթական խնդիրների լուծման համատեքստում:

Փոխներգործային ուսուցումը հանգեցնում է կրթական գործընթացի քանակական և որակական փոփոխությունների:

Փոխներգործության մեթոդների առաջադրանքները օգնում են ինքնուրույն որոնման հմտությունների զարգացմանը:

Օտար լեզուների դասերին տարբեր ուսումնական միջոցների, մեթոդների ռացիոնալ օգտագործումը օգնում է արագ և ռացիոնալ բացատրել նոր նյութը, համախմբել այն, ստուգել ձեռք բերած գիտելիքների մակարդակը:Խմբային աշխատանքները դասերի ժամին նպաստում են սովորողների հմտությունների զարգացմանը, կրթական հմտությունների ձևավորմանը և ուսումնասիրվող առարկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը:

Համագործակցային դասը կարևոր դեր է խաղում ուսուցմնա գործընթացում: Նախ աճում է սուբյեկտների ինտելեկտուալ ակտիվությունը: Երկրորդ՝ պայմաններ են ստեղծվում մրցակցության և ջանքերի համախմբման համար: Խմբակիցներից յուրաքանչյուրը ունենում է իր պատկերացումները և հակասությունները ներկայացված հարցի շուրջ, որը վերածվում է քննարկման:

Օգտագործված գրականության ցանկ

1.Գյուրջինյան Դ. Մայրենի հանրակրթական դպրոցի 6-րդ դաս. դասագիրք Էդիթ Պրինտը 2016թ. 240էջ

2.101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար Բուդապեշտ 2006-62էջ

3.Լիլիթ Meliqsetyan ,,Անահիտ՝

4.Щукин А. Н. Обучение иностранным языкам: Теория и практика:

5.Pometun Current lesson. Interactive interactive learning technology О.В. Торновски, ,,Succesful presentation: textbook for teaching business and English students of economic specialities, Kyiv Lenvit 2007

6.https//hy.wikipedia.org.

7. https//school-education.ec.europa.eu/en/etwinning

8.Johnson D.W. Johnson R.T. Holuber.E (2008) <<Coorporation in the classroom>> Edina, MN: Interaction Book Company.

9. Ուսուցման արդյունավետ հնարներ

Հայաստան 2020 Սերոբ Խաչատրյան

10. https://en. Wikipedia.or/wiki/cooperative_learning

11. 101 գաղափար նորարարական մեթոդներ կիրառող ուսուցիչների համար Microsoft Հունգարիայի կողմից J.O.S Բուդապեշտ 2006թ. Արթոիր Գալստյան Խմբագիրներ՝ Ադամ Մերենցի, Վինցե Սաբո, Աթիլլա Տակաչ